

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2018թ. հունվարի 30-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
գիտական խորհրդի անդամների
(ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. Վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորի 2017 թվականին կատարած աշխատանքների հաշվետվություն
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Ադամյան
2. Ընթացիկ հարց: Առարկայական ծրագրի ձևաչափը հաստատելու հարցը
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան
3. Ընթացիկ հարց: «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում սովորողի ակադեմիական շարժունության կարգ»-ը հաստատելու մասին
Զեկուցող՝ իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան
4. Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով երաշխավորել «Կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրները և հակակոռուպցիոն ռազմավարական ուղղությունները պետական ծառայության համակարգում» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
5. Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով երաշխավորել «Կառավարիչների պատրաստման և վերապատրաստման հոգեբանական հիմնահարցեր» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե
Զեկուցող՝ Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Ադուզումցյան
6. Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով երաշխավորել «Խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե
Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան
7. Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Վարդինե Ասպոյի Մեսրոպյանի, հայցորդներ Մաթենիկ Լուկաշի Գրիգորյանի և Արմինե Մարգսի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Ադուզումցյան
8. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Գևորգ Մարտիկի Ղուկասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան

9. Ընթացիկ հարց: Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռոբերտ Խաչատուրի Խաչատրյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական խորհրդատու նշանակելու հարցը:

Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան

10. Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի վարիչի ընտրության հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

1. **Լսեցին՝** Վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորի 2017 թվականին կատարած աշխատանքների հաշվետվություն:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Ադամյան

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը:

Որոշեցին՝ Վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորի 2017 թվականին կատարած աշխատանքների հաշվետվությունն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

2. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Առարկայական ծրագրի ձևաչափը հաստատելու հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան

Արտահայտվեցին՝ Գ.Գսպոյանը, Մ.Մարգարյանը:

Որոշեցին՝ Հաստատել առարկայական ծրագրի ձևաչափը (ձևաչափը կից ներկայացվում է):

3. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում սովորողի ակադեմիական շարժունության կարգ»-ը հաստատելու մասին

Զեկուցող՝ իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան

Արտահայտվեցին՝ Գ.Հովհաննիսյանը, Գ.Գսպոյանը, Խ.Բեգիրջյանը:

Որոշեցին՝ Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում սովորողի ակադեմիական շարժունության կարգ»-ը (կարգը կից ներկայացվում է):

4. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով երաշխավորել «Կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրները և հակակոռուպցիոն ռազմավարական ուղղությունները պետական ծառայության համակարգում» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Զեկուցողը ներկայացրեց թեմայի արդիականությունը, նախատեսվող աշխատանքները և աշխատանքային խումբը (կից ներկայացվում է թեմայի նախագիծը):

Արտահայտվեցին՝ Հ.Ստեփանյանը, Ա.Սարիբեկյանը:

Որոշեցին՝ Երաշխավորել «Կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրները և հակակոռուպցիոն ռազմավարական ուղղությունները պետական ծառայության համակարգում» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով:

5. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով երաշխավորել «Կառավարիչների պատրաստման և վերապատրաստման հոգեբանական հիմնահարցեր» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե:

Զեկուցող՝ Ամբիոնի վարիչ Ռ.Ադուզումգյան

Ձեկուցողը ներկայացրեց թեմայի արդիականությունը, նախատեսվող աշխատանքները և աշխատանքային խումբը (կից ներկայացվում է թեմայի նախագիծը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Լ.Պետրոսյանը:

Որոշեցին՝ Երաշխավորել «Կառավարիչների պատրաստման և վերապատրաստման հոգեբանական հիմնահարցեր» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով:

6. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով երաշխավորել «Խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե

Ձեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան

Ձեկուցողը ներկայացրեց թեմայի արդիականությունը, նախատեսվող աշխատանքները և աշխատանքային խումբը (կից ներկայացվում է թեմայի նախագիծը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ա.Եզեկյանը:

Որոշեցին՝ Երաշխավորել «Խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով:

7. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Վարդինե Ասպոյի Մեսրոբյանի և հայցորդներ Սաթենիկ Լուկաշի Գրիգորյանի և Արմինե Սարգսի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը

Ձեկուցող՝ Ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

Ձեկուցողը ներկայացրեց, որ Կառավարման հոգեբանության ամբիոնում 24.01.2018թ. կայացած նիստում քննարկվել է ամբիոնի ասպիրանտ Վարդինե Մեսրոբյանի և հայցորդներ Սաթենիկ Գրիգորյանի և Արմինե Խաչատրյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ առաջարկում են գիտական խորհրդին՝

- 1) Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Վարդինե Մեսրոբյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կրթության կառավարիչների մասնագիտական և հոգեբանական որակների համահարաբերակցությունը» վերտառությամբ՝ ԺԹ.00.01-«Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների թեկնածու դոցենտ Սոնա Պողոսյանին:
- 2) Կառավարման հոգեբանության ամբիոնի հայցորդ Սաթենիկ Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ղեկավարի անձնային հոգեբանական որակների դրսևորումը տարբեր մշակութային միջավայրերում» վերտառությամբ՝ ԺԹ.00.01-«Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների թեկնածու դոցենտ Սոնա Պողոսյանին:
- 3) Կառավարման հոգեբանության ամբիոնի հայցորդ Արմինե Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Անձի հոգեբանական որակների ձևավորման առանձնահատկությունները սոցիալական ցանցերի ազդեցության ներքո» վերտառությամբ՝ ԺԹ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների թեկնածու դոցենտ Սոնա Պողոսյանին:

Արտահայտվեցին՝ Ռ.Աղուզումցյանը, Լ.Պետրոսյանը:

Որոշեցին՝

1) Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Վարդինե Ասպոյի Մեսրոբյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կրթության կառավարիչների մասնագիտական և հոգեբանական որակների համահարաբերակցությունը» վերտառությամբ՝ ԺԹ.00.01-«Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների թեկնածու դոցենտ Սոնա Պողոսյանին:

2) Կառավարման հոգեբանության ամբիոնի հայցորդ Սաթենիկ Լուկաշի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ղեկավարի անձնային հոգեբանական որակների դրսևորումը տարբեր մշակութային միջավայրերում» վերտառությամբ՝ ԺԹ.00.01-«Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների թեկնածու դոցենտ Սոնա Պողոսյանին:

3) Կառավարման հոգեբանության ամբիոնի հայցորդ Արմինե Սարգսի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Անձի հոգեբանական որակների ձևավորման առանձնահատկությունները սոցիալական ցանցերի ազդեցության ներքո» վերտառությամբ՝ ԺԹ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների թեկնածու դոցենտ Սոնա Պողոսյանին:

8. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Գևորգ Մարտիկի Ղուկասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Զեկուցող՝ Ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան

Զեկուցողը ներկայացրեց, որ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնում 22.01.2018թ. կայացած նիստում քննարկվել է ամբիոնի ասպիրանտ Գևորգ Մարտիկի Ղուկասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ առաջարկում են գիտական խորհրդին՝ Գևորգ Մարտիկի Ղուկասյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Եվրոպայի հայկական լոբբին որպես Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության հարաբերությունների զարգացման դերակատար» վերտառությամբ՝ ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մամիկոնի Մարգարյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Ա.Սարիբեկյանը:

Որոշեցին՝ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Գևորգ Մարտիկի Ղուկասյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Եվրոպայի հայկական լոբբին որպես Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության հարաբերությունների զարգացման դերակատար» վերտառությամբ՝ ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մամիկոնի Մարգարյանին:

9. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական գիտական համալսարանի Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռոբերտ Խաչատրյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական խորհրդատու նշանակելու հարցը:

Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան

Զեկուցողը ներկայացրեց, որ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնում 22.01.2018թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռոբերտ Խաչատուրի Խաչատրյանի դոկտորական ատենախոսության թեմային հաստատման և գիտական խորհրդատու նշանակելու հարցը և նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդին՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռոբերտ Խաչատուրի Խաչատրյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել «Ռազմավարական կառավարման հիմնախնդիրները և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում» վերտառությամբ՝ Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և գիտական խորհրդատու նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ա.Սարիբեկյանը, Գ.Չատինյանը:

Որոշեցին՝ Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռոբերտ Խաչատուրի Խաչատրյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել «Ռազմավարական կառավարման հիմնախնդիրները և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում» վերտառությամբ՝ Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և գիտական խորհրդատու նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանին:

10.Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի վարիչի ընտրության հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցողը ներկայացրեց, որ Կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու նպատակով դիմել են երեք հոգի՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Վարազդատի Միքայելյանը, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գարեգին Զիվանի Շմավոնյանը և տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վիլեն Վիկտորի Խաչատրյանը (կից ներկայացվում է մանդատային հանձնաժողովի եզրակացությունը): Այնուհետև Կառավարման ամբիոնի վարիչի թեկնածուներ Վիլեն Խաչատրյանը և Միքայել Միքայելյանը հակիրճ ներկայացրեցին ամբիոնի զարգացման ծրագրերը, պատասխանեցին հնչեցրած հարցերին: Նախագահողը նշեց, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի ընտրության կարգ»-ի 21-րդ կետի՝ «Գիտական խորհրդի նիստին թեկնածուների ներկայությունը, որպես կանոն, պարտադիր է: Բացակայող թեկնածուի մասին, նրա գրավոր համաձայնության դեպքում, գիտական խորհուրդը, լսելով նախագահողի պարզաբանումները, ընդունում է որոշում թեկնածությունը նիստում քննարկելու կամ քննարկումից հանելու վերաբերյալ»: Հիմք ընդունելով նշված կետը և այն հանգամանքը, որ Գ. Շմավոնյանը չի ներկայացել հիվանդ լինելու պատճառով, նախագահողն առաջարկեց չհանել Շմավոնյանի թեկնածությունը, ընթերցել ներկայացված ծրագիրը: Առաջարկն ընդունվեց միաձայն: Գիտական խորհրդի քարտուղարը ներկայացրեց Գ.Շմավոնյանի ներկայացրած ամբիոնի զարգացման ծրագիրը:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանն առաջարկեց իրականացնել փակ գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Հասմիկ Ստեփանյան՝ անդամ
3. Արմեն Խաչատրյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 1 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Հ.Ստեփանյանը ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի ընտրության կարգ»-ի 31-րդ կետը, համաձայն որի՝ «Ամբիոնի վարիչի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների կեսից ավելին»:

Որոշեցին՝ Հիմք ընդունելով «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի ընտրության կարգ»-ի 31-րդ կետը և գիտական խորհրդի նիստի գաղտնի քվեարկության արդյունքները (նիստին մասնակցել են գիտական խորհրդի 26 անդամներից 22-ը, որից Միքայել Միքայելյանին կողմ է քվեարկել՝ 1 հոգի, Վիլեն Խաչատրյանին՝ 19, Գարեգին Շմավոնյանին՝ 0), **Վիլեն Վիկտորի Խաչատրյանն** ընտրվել է Կառավարման ամբիոնի վարիչ:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

30 հունվարի 2018թ.

Կ.Տ.